

լով՝ իշխանաց հաւանութեամբը ինքը
անցաւ անոնց տեղ՝ Դահմազ կ ուլի
իսանին ցեղն ՅՕտարի մը շփոթութեամբ
թագաւորելէն ետեւ, անցաւ Վաչա-
րեանց ցեղին որ Շինկիղսանէն առաջ
կու գան։ Ֆէթհ-Ռիլ շահին ատեն-
ները, այսինքն 1827ին սկսաւ Պար-
սից և Ուուսաց պատերազմը, և Ուուս-
ները յաղթելով՝ առին Հայաստանի
մէկ մասը Պարսից ձեռքէն, և Հայոց
կաթողիկոսարանն ալ Ուուսի քամնին
մէջն ինկաւ գարձեալ քառասուն հա-
զար Հայ ալ անցուցին Պարսկաստա-
նէն Երևանու կողմերը։ Ֆէթհ-Ռի-
լին յաջորդեց իր թուր Ուուսի Համմէտ
շահ, անոր ալ՝ Ուուրէտին 1848ին։

Կը շարունակուի։

Հին Քնար

Բ

Թեոդորոս Երգիչ

Խ Խորհուրդ առագ երկուշարարին։

Եետ Առորս Երգոյն ամենէն նշանա-
ւոր և բանաստեղծական Երգ մեր հին
քնարին, գոնէ կցրդոց գրոց մէջ, այս
հետեւեալ կցուրդ կամ շարականս է,
աւագ երկուշաբժի օրուան համար շի-
նուած։ որոյ խորհուրդն կամ յիշա-
տակնէնախաստեղծից դուրս հանուիլն
'ի զրախտէն։ Երգոյս Հեղինակն յայտ-
նի է անուամբն՝ Ծէոդորոս ։ ինչպէս Եր-
գոյն առաջին մասին տնագլուխիքն կա-
պէն։ ուր և նորօրինակ բան մը ըրած է
Հեղինակն։ անուանը Ի զրին սկըզբնա-
ւոր բառ չգտնելով կամ չուզելով դնել,
ծանօթութիւն մը կ'ընէ, բայց ծանօ-
թութիւնն այլ երգոյն կարգն անցու-
ցեր է եղանակաւոր խաղերով։ Օ ան-
բանականն 'ի բաղաձայնս թողլով ըզ-
գիր ։, այսինքն զտառն Ի, զոր անբա-
նական կոչ իբր անբնական մեր լե-
զուիս, որով սկսած բառ չկայ։ Այս

նորաձեւ մտածութեամբն այլ անշուշտ
կ'երևի քերդողին բանաստեղծական
հանձնարն։

Ի՞այց ով է այդ Ժակոդորոսն և ո՞ր
դարու վկայուած չէ։ Ո՞իայն արժան
և հածոյ է գիտնալ, որ Ժակոդորոս և
(որ նոյն է) Ժայրոս անուամբ ոչ միայն
հին Հեղինակներ ունիմք, այլ և հին
և նոր երգիներ ինչպէս գերադանծ և
մէծ բաբունապէտ ու էրաժիշտ մը
յիշեալ 'ի Դիլիս քաղաք 'ի սահմանս
Կիլիկիոյ, յամին 1643։ — Պօնիկ Թու-
րոս երաժիշտ և Տգնաւոր եպիսկոպոս
մը վախճանեալ յլմիդ յամին 1577։
յայտնի է որ ասոնք շատ նոր են մեր
երգէն և նաև անոր օրինակուած ձե-
ռագիրներէն, որ 500 տարիէ աւելի հին
են։ և ոչ այլ իմաստուն և հանձարէղ թո-
րոս Թադէրոնց որ հաւանօրէն մեր (Նշն
թագաւորի զրաներէցն էր, և վախ-
ճանեցաւ յամին 1342։ Լնկէ այլ ա-
ռաջ կու Ճանշնամք 'ի վերջ Ա. Պա-
րու և 'ի սկիզբն Ա. Պան զ'ընտրէալ ե-
րաժիշտն իմուսոս որ Սարբերդու Ո.
Հովհաննէս եկեղեցւոյ (հաւանօրէն
և վանաց) առաջնորդ է եղեր, և
հայր և սբբանէալ էրժնաւոր անուանի։
Ա. յս ընտրեալ անձէն այլ վեր և հին
կարծէմք մեր երգոյն Հեղինակն։ թե-
րևս ինչուան առ Քառենաւորն Թէոդորոս
կրնամք հանել, որ Լ. գարու Հեղինակ
է, և այլ աւելի առաջ՝ առ Թէոդորոս
աշակերտն Ուովսիսի Հեղինակի Պի-
տոյից գրոց, որ սովորաբար Սորենէցոյ
կ'ընծայուի ։ որով և Ժակոդորոս կ'ըլլայ
'ի վերջ Լ. և 'ի սկիզբն Օ. գարու ։
նոյն իսկ յիշեալ գրոց Ճարտասանական
օրինակաց ոմանց Հեղինակն կարծի
նոյն Ժակոդորոս ։ հօն Ա. գամայ գրախ-
տէն ընկնակն ետեւ իր բերնէն երկու
բարառնութիւն կայ, որոց մէկուն մէջ
քիչ մը մեր երգոյն մօտենան իմաստքն։
եթէ ուզէ ընթերցողն՝ զայն այլ կար-
դայ զայս այլ։

Ի խորհուրդ աշագ երկուշաբարի:

Ուագաւոր Երկնաւոր ամենակալ Հայր, նախախնամութեամբն ստեղծեալ զարարածս, և յօրինեալ մշտնջենաւորակից սուրբ Հոգւոյն։ Աւ ետես զի բարի է։

Խըրորդութիւն սուրբ անիմանալի լոյս, համասփիւռ ծաւալումն, ճառագայթարձակ հրակերպ երեւմամբ։ Նիւթ անգոյ։ բարեգործեալ զփափկութեան զդրախտն ի հանդերձեալ տիրականին առ ի ստեղծուածոյս բնակութիւն։ Աւ ետես զի բարի է։

Ու է պատմել զհրաշատեսակ, զաստուածատունկ ծաղկաւէտ ծառազարդ բուրաստան դալարավայր վայելութեանցն զգեղեցկութիւն, ի յորդառատ ու սոգմամբն ճոխացելոյն։ որ և ի նմա քառավլուակ բղխմամբն արբուցաներ զըրեքծագեան զտիեղերս։ Աւ ետես զի բարի է։

Դադարեցոյց արարին զմարդն ի դրախտին։ ստեղծեալ ամենազօր հրամանաւն, ի հակառակիցն միաբանեալ՝ ի պատճառս առ ի չմեղ բնութեանն։ Աւ ետես զի բարի է։

Ունկը նախամօրն տկարացեալ օձին դաւաճանութեամբ՝ զպատուիրանն մոռացեալ խաբեցաւ, և պարտեցաւ ի դառնութեան ճաշակէն։ և յարարչէն պակուցեալ զարհուրէր։ Աւ ետես զի չար է։

(Օ անբանականն ի բաղաձայնս թողլով զգիր) Ողբացուք զհօրն զվուանդն։ զախտն որդեսպան։ զիշխանականն ընկալեալ՝ արտաքսեցան յանհըպելի և յանմերձենալի լուսոյն։ Աւ ետես զի չար է։

Ունիմք արտօսր բազում և ի վերայ այրակորոյս նախամօրն գլորման՝ որ թէպէտ զպատուիրանն մոռացեալ խաբեցաւ, այլ տէրն կենաց յաղագս վճռին դատապարտութեան ի վերայ ածեալ դարձուցանէր ի հող։ Աւ ետես զի բարի է։

Ոիրտ իմ արթուն է առ քո անյիշաշար բարերարութիւնդ բազումողորմ Աստուած։ որ կուսական ծննդեամբդ և կենարար խախւդ զանիծիցն բարձեր զվՃիռ։ զմեղուցեալ ծառայս մի մոռանար, այլ յիշեա ողորմութեամբ քո, որ միայնդ ես մարդասէր։

Ուղիք մօր իմոյ մարտեան ընդ իս, և եղին զիս պահապան այգեստանոյն։ Օ ի զայգին իմ ոչ պահեցի։

Աստուծոյ տնկագործութեանն հաւատարիմ կենաց ծառ՝ ի միջոցին կառուցեալ ի փափկութեան դրախտին, բարունակաձե զամենայնն յինքեան պարունակէր սկզբնաձնին զօրութիւնն։ Ինդէմ սորա բաժանեալ գունագեղ անորիշ բաղադրութեամբն զերկաքանչիւրոցն զանյայտն ունելով, զբարոյն ասեմ և զչարին։ Օ ի զայգին իմ ոչ պահեցի։

Դեղեցիկ պատմուճանաւն զարդարեալ էի և տէր էի ամենայն կենդանեաց։ յանկարծօրէն պատահեաց արտաքոյ բարեւոյ ինձ լինել, և խաւարազգեստիս այսմիկ հանդիպիլ մարմնոյս։ քանդի մախացաւ ընդ իս բանսարկուն սատանայ, և կորզեաց զիս յանբաւ բարութեանց։ Օ ի զայգին իմ ոչ պահեցի։

Ուկս այսորիկ և յամենիմաստէն Աստուծոյ յերեսաց սարտուցեալ՝ սազարթաւ պատ եղանելով խուսափէր ընդ աւետուղէշ տնկոյն, չհրաժարէր ի մահահամբոյր պատուհասողէն։ այլ ի հեղահարցումն դիտողին յուսագնեալ

յանգեր, “Ո՞՞ արդեօք կարծիցես զիս չըրամայեալ խարոյն հպենալ” . տիրապատճառեալ աղեղնաբանէր . և ի կողամատն անցուցանելով զառիթ խարոյն ձաշակման : Օ ի զայգին իմ ոչ պահեցի :

Եւաւ եմ ես և գեղեցիկ, դստելք Խրուսաղէմի, մի հայիք ընդ իս . զի սեացեալ թխացեալ եմ ես քան զվրանն Խեղարու և քան զխորանն Ասղոմնի . քան զի խեթիւ հայեցաւ ընդ իս արեգակն : Օ ի զայգին իմ ոչ պահեցի :

Քանզի անարատ լուսոյն եղէ կերպարան, խորացեալ ի հողեղէն պատկերին, սկզբնատպին գեղեցկութեամբն փայլեալ . իսկ փորձութեանն զբոցակէզ տապ մոլորութեանն ի վերայ արկանելով՝ մինչդեռ բողքով առանց արմատոյ, ի վերայ հասեալ ըմբռնեաց զգալար և զուարձացեալ տեսիլ իմ . սեացոյց խորշակաւն : Օ ի զայգին իմ ոչ պահեցի :

Ե՞ս ձայն եղբօրորդւոյ իմոյ . սա եկն արշաւելով ի վերայ լերանց Ռեթելեայ՝ արարչական սիրով փութեացեալ ի ինդիր գերելոյն ի մահ, արքայական պատկերին . առ ի հատուցանել զդատաստան դաւաճանութեան խաթողին ի կորուստ թշնամոյն : Եւ բարձրացեալ ի վերայ դատապարտութեան փայտին՝ ողկոյզ օրհնութեան . աղբերացոյց ինձ զուրախարար բաժակ կենարար արեամբն . և աստուածային հրաշագործութեամբն վերածեաց ի խաւարասէր բանդէ կապանաց, և բարձրացոյց ի փառս առաջինս արքայապատիւ ճոխութեանն : Ա ասն որոյ և մեք գոհացողական ձայնիւ երգեսցուք փրկողին զփառս ի պատիւ աստուածութեան նորա, յաւիտեանս ամէն :

Եստանօր ժողովեալքս ի տաճար փառաց սրբութեանդ քո, անկանիմք առաջի անոխակալ քո տէրութեանդ . մի թողուր զմեզ յօգնականութենէ քումմէ, այլ պահեա ամրածածուկ ընդ հովանեաւ կենսատու սուրբ խաջին . որ միայնդ ես մարդասէր :

Աշխարհազրական լայնուրիւն և երկայնուրիւն:

(Տիկ երես 60)

Գ

Ի՞նչպէս էը գոյնուի երկայնութիւնն : — Ո՞ր և է տեղւոյ մը լայնութիւնը բացատրելու և գտնելու ժամանակ, երկնից երեսն այլ և այլ կէտեր և գծեր հաստատեցինք, առ որ կարող ըլլանք վերաբերիլ, ինչպէս են բեկեռքն ու երկնային հասարակածը : Ա յնութիւնը գրտնելու համար, բաւական է այն տեղւոյն գենիդին դիրքն որոշել համեմատութեամբ այս կիտից և գծից : Բայց երբ խօսքն երկայնութեան վրայ կու գայ, ինդիրը բոլորովին կերպարանափոխ կ'ըլլայ . և սակայն անկարելի

է բացատրել երկայնութիւնն առանց վերաբերելու գոնէ երկու տեղեաց, այսինքն մէյ մը այն՝ որուն երկայնութիւնը կը փնտուի, մէյ մ'ալ այն՝ որ կ'ընտրուի իբր կէտ հաստատութեան, ուրկէ պէտք են սկսիլ ամենայն երկայնութիւնք : Եթէ կարելի ըլլար զիտել երկնից երեսն այն երկու կէտերն որ մի և նոյն ժամանակ երկու տեղեաց զենիդն են, այն ատեն կը գտնուէր անոնց երկայնութեանց տարբերութիւնը, միտք զնելով թէ Երբ այս երկու կէտերն այն տեղւոյն միջօրէականէն կ'անցնին՝ որուն երկայնութիւնը կը փնտուի :

Երկայնութեանց գիւտին մեծ առաջարկութիւնը լաւ հասկընալու համար, երեակայենք երկրագունուս իր թաւալական շարժմամբն առանցիցը վրայ դառնայ, և շուրջ պատած երկ-